ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 2019Թ.-Ի ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի 2019թ.-ի տարեկան հաստատված ծրագրի շրջանակներում <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի, ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանի համաձայն ներքին աուդիտի բաժնի կողմից 2019թ.-ին նախատեսվել և իրականացվել է 31 միավոր աուդիտ, որից 15 միավոր մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներում, 3 միավոր մարզային ենթակայության <<Եղեգնաձորի երկրագիտական թանգարան>>, <<Եղեգնաձորի երաժշտական դպրոց>> և <<Եղեգնաձորի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ներում, 2 միավոր մշակույթային միջոցառումներ, 8 միավոր առողջապահական կազմակերպություններում, որից 3 միավոր առողջապահական ՓԲԸ-ներում, 5 միավոր առողջապահական ՊՈԱԿ-ներում, 3 միավոր մարզպետարանի գնումների գործընթացի համապատասխանության աուդիտ: ՊՈԱԿ-ներում, ՓԲԸ-ներում և մշակույթային միջոցառումների մասով իրականացվել է ֆինանսական աուդիտ: Նշված ՊՈԱԿ-ներում, ՓԲԸ-ներում և գնումների գործընթացում աուդիտի ստանդարտների համաձայն, այդ թվում բավարար տեղեկությունների փաստաթղթային ստացման հիման վրա, փաստացի իրականացվել է աուդիտ և կազմվել աուդիտի հաշվետվություն: Հաշվետվությունները ներառել են աուդիտի ընդհանուր նկարագիրը, գտնվելու վայրը, գործունեության իրավական հիմքերը, գործունեության շրջանակները, խնդիրները, աուդիտի արդյունքները, եզրահանգումները, առաջարկությունները: Իրականացվել են ֆինանսական հաշվետվություններում, ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում, հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության գնահատում: Աուդիտի ընթացքում աուդիտի են ենթարկվել ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանը, գործունեության իրավական ակտերին համապատասխանությանն առնչվող բոլոր գործառույթները: Աուդիտի ենթարկված ՊՈԱԿ-ների, ՓԲԸ-ների ղեկավարներին ներկայացվել է առաջարկություններ արձանագրված թերությունների և խախտումների վերացման ուղղությամբ: Միաժամանակ այդ ուղղությամբ ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է խորհրդատվություն և վերահսկողության գործընթաց:

Ներքին աուդիտի բաժնի ավագ մասնագետ՝ Ն. Կարապետյան